Հաստատում եմ՝ Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարանի
ռեկտորի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ
---------- Ս. Մ. Թումանյան
«--------» ---------- 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են ՎՊՀ-ի մանկավարժության ամբիոնի նիստում (05.02.2020թ., արձ. թիվ 9):

Նիստին մասնակցում էին՝ Պ. Գևորգյանը – մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտներ՝ Ա. Մակարյանը, Լ. Հարոյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Բեժանյանը, Ա. Հարությունյանը, Լ. Բաղդասարյանը, Ք. Վիրաբյանը, մ.գ.թ., ասիստենտներ՝ Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը:

Պատմամշակութային ժամանակաշրջանների հերթագայության մեջ հասարակության կազմակերպման հաստատուն հիմք է դարձել ընտանիքը՝ որպես էթնիկ հանրության մենթալիտետի, ավանդույթների, արժեհամակարգի կրող և արտահայտիչ: Ընտանիքի ավանդական արժեքների պահպանումը էթնիկական ինքնապաշտպանության միջոց է: Աշխարհաքաղաքական տեղաշարժերի մեջ հայտնված ընտանիքն այսօր կանգնած է սերնդեսերունդ փոխանցված արժեքների վերաիմաստավորման խնդրի առջև: Ներկայումս ընտանիքում կառուցվածքային և գործառույթային փոփոխությունները, սերունդների միջև պահպանողական և նոր հայացքների ու չափանիշների տարբերություն-ները հանգեցնում են դաստիարակչական լուրջ հիմնախնդիրների, որոնց հաղթահարման

համար արդիական է էթնոմանկավարժության դերի և գործառույթների նորովի արժևորումը: Դա հնարավորություն կընձեռի դիմակայել համակարգային փոփոխություններին, ազգային հոգևոր-մշակութային արժեքների ժառանգորդության համար նոր մոտեցումներ որոնել՝ ընտանեկան դաստիարակության ոլորտում առկա հիմնախնդիրները գիտակցելու և լուծելու համար, որով և պայմանավորված է հետազոտության արդիականությունը:

Ատենախոսությունը գրված է տրամաբանորեն կառուցված պլանի համաձայն, առանձնանում է բովանդակային և կառուցվածքային լիարժեք ներդաշնակությամբ, ուսումնասիրվում է մանկավարժական, գիտամշակութային արդիական հիմնահարց և որպես այդպիսին կարևոր նշանակություն ունի պետականաշինական ոլորտի համար:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ տասներկու ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, հստակորեն ձևակերպված են ատենախոսության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, խնդիրները, պաշտպանությանը ներկայացվող դրույթները և տրամաբանական որոշակի հաջորդականությամբ դրանցից բխող եզրակացությունները:

«Ընտանեկան դաստիարակությունը՝ սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր» խորագրով առաջին գլխի չորս ենթագլուխներում վերլուծված և բնութագրված են «ընտանիք» կենսասոցիալական կառույցի ծագման ու զարգացման ընթացքն ըստ կառուցվածքի և առաջնորդության: Ատենախոսը մեկնաբանել է էթնոմանկավարժական մշակույթը, և այդ տեսանկյունից հաջողությամբ վերլուծվել են նշանավոր փիլիսոփաների և մանկավարժների՝ Կոնֆուցիուսի, Հերոդոտոսի, Յան Ա. Կոմենսկու, Յ. Հ. Պեստալոցցու, Ա. Դիստերվեգի, Կ.Դ. Ուշինսկու՝ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ գաղափարները: էթնոմանկավարժության համատեքստում նորովի անդրադարձ է կատարվել քննարկվող հիմնահարցի վերաբերյալ հայ էթնոմանկավարժական մտքի զարգացումներին և դասական մանկավարժների գիտագործնական փորձին:

Հետազոտողի կողմից պատմամշակութային հետահայաց վերլուծություններ կատարելը պայմանավորված է այնպիսի համոզիչ փաստարկումների որոնմամբ, որոնցով հիմնավորվում է, որ մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում ընտանեկան դաստիարակությունը եղել է էթնոմանկավարժության հիմնահարց:

«Ընտանեկան դաստիարակության միջոցները հայ էթնոմանկավարժական մշակույթում» խորագրով երկրորդ գլխի չորս ենթագլուխներում ատենախոսը մանրամասնորեն անդրադարձել է ազգագրական նյութերում, հայկական էպոսում, հեքիաթներում, երգ ու պարում արտացոլված ընտանեկան դաստիարակության գաղափարներին:

Միանգամայն նոր՝ էթնոմանկավարժական տեսանկյունից են վերլուծվել «Սասունցի Դավիթ» էպոսը, հայ ժողովրդական բանահյուսության ժանրերը, բնակարային ձևահնարքը, կահ-կարասին, էթնոկիրառական արվեստը: Խորապես արժևորվում է այն, որ ատենախոսն անդրադարձել է երգահան, ազգագրագետ, մանկավարժ Կոմիտաս Վարդապետի էթնոերաժշտական ժառանգությանը: Վերլուծված են օրորոցային երգերը՝ որպես ընտանեկան դաստիարակության միջոցներ: Կարևոր նորույթ է այն, որ հետազոտողը ընտանեկան դաստիարակության տեսանկյունից քննարկել է հատկապես միջսերնդային խորհրդանշական հաղորդակցման արտացոլումը ընտանեկան կապերի հավերժության գաղափարը մարմնավորող աշխարհիկ և հոգևոր կառույցներում, կարևորել է այդ երևույթների մանկավարժական նշանակությունն աճող սերնդի ձևավորման գործընթացում:

Երրորդ՝ «Ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը ժամանակակից աշխարհում» խորագրով գլխի չորս ենթագլուխներում ատենախոսը, անդրադարձ կատարելով համաշխարհայնացման գործընթացների արդյունքում մանկավարժության առջև ծառացած խնդիրներին, փորձ է արել գտնելու դրանց լուծման ուղիները պետական կրթական համակարգում հազարամյակների քննությունը բռնած ընտանեկան դաստիարակության էթնոմանկավարժական միջոցների գիտականորեն հիմնավորված կիրառման միջոցով: Այդ խնդիրը լուծելու նպատակով իրականացվել են սոցիալական հարցումներ 36 հարց պարունակող երեք բնույթի հարցաթերթիկների միջոցով:

Մանրակրկիտ հետազոտական աշխատանքի արդյունքում ստացված վերլուծական տվյալների և տեսական փորձի օրգանական համադրման միջոցով ատենախոսը մշակել է «Ընտանեկան դաստիարակություն և արժեբանություն» փորձնական դասընթացի ծրագիր: Ծրագրի թեմատիկան բխում է հայ էթնոմանկավարժական մշակույթից և դրա փորձնական կիրառումը ավագ դպրոցում մեր իրականությունում հաջողված գիտամեթոդական աշխատանքի նոր փորձ է:

Ելնելով Ա.Մանուկյանի հետազոտական աշխատանքից՝ կարելի է հավաստել, որ հեղինակը, լավատեղյակ լինելով տարբեր ժողովուրդների մշակութային գործերին, կարողացել է համաշխարհային դիցաբանության զուգահեռ համեմատությունների միջոցով վեր հանել դրանց սյուժեներում արտացոլված ընտանիքի զարգացման փուլերի արձագանքները, ընտանեկան բռնությունների դրսևորումները և դաստիարակչական գաղափարները: Կարևոր նորություն է նաև այն, որ հեղինակը փորձ է արել հզոր պետություններ ստեղծած նախնիների հոգևոր ժառանգության մեջ փնտրել այսօրվա հասարակության ներդաշնակության և պետության հիմքերը խարխլող ընտանեկան բռնությունների կանխարգելման բանալին: Առաջադրված հիմնահարցի նմանօրինակ խորքային ուսումնասիրությունն իրենով հարստացնում է նաև էպոսագիտությունը: Հետազոտական աշխատանքն առանձնանում է նաև նրանով, որ աշխարհագրական առումով տրված են ոչ միայն Հայկական Լեռնաշխարհի՝ հայ ժողովրդի բնօրրանի, այլև գաղթավայրերի ազգագրական նյութերի վերլուծությունը էթնոմանկավարժական տեսանկյունից:

Հետազոտական աշխատանքում առաջադրված բոլոր խնդիրները հետազոտված են: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Նշված արժանիքների հետ միասին աշխատանքում առկա են որոշ բացթողումներ.

1. Քանի որ «Ընտանեկան դաստիարակություն և արժեբանություն» դասընթացը նախատեսվում է ավագ դպրոցում ուսումնասիրման համար, նպատակահարմար կլիներ համառոտ ներկայացվեին պատանեկան տարիքի առանձնահատկությունները և տարիքային այդ կենսափուլում ընտանեկան դաստիարակության՝ այդ գործոններով պայմանավորված յուրահատկությունը:

2. 2-րդ գլխի 2-րդ ենթագլխի վերնագիրը, մեր կարծիքով, պիտի ձևակերպված լիներ հետևյալ կերպ՝ «Ընտանեկան դաստիարակության հարցերը բանահյուսության այլ ժանրերում»:

3. «Ընտանեկան դաստիարակությունը բանահյուսության այլ ժանրերում» խորագրով ենթագլխում անդրադարձ է արված նաև էպոսում առկա խրատների կենսափիլիսոփայությանը: Ո՞րն է իմաստը, չէ՞ որ էպոսը վերլուծվել է նախորդ ենթագլխում:

4. Ատենախոսության բովանդակությունից դուրս է մնացել հնդկական մշակույթը, որին նույնպես կարելի էր վերլուծական անդրադարձ կատարել:

5. Եզրակացությունների 1-ին կետը հայտնի դրույթ է:

6. Աշխատանքում կան թարգմանչական անհարթություններ, լեզվական և տեխնիկական վրիպակներ, ինչի վրա ևս պիտի ուշադրություն դարձնել:

Նշված նկատառումներն ընդհանուր առմամբ չեն ազդում հետազոտության գիտագործնական արժեքի վրա:

Աշոտ Լեկդարի Մանուկյանի «Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում» թեմայով ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, ունի տեսական և գործնական որոշակի արժեք ու համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակը, մեր կարծիքով, արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՎՊՀ- ի մանկավարժության ամբիոնի
վարիչ, մ.գ. դ., պրոֆեսոր՝ Պ. Հ. Գևորգյան

Պ. Հ. Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՎՊՀ-ի գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝ Ս. Ս. Բեժանյան